

79 Թուին գիւղիս վերեն տեսայ մի ընդարձակ գերեզմանատուն, որ մեծամեծ խաչքարինք ունէր, այս քարեր տակաւ առ տակաւ տարուած են, միայն այժմ մի քանի մեծ անխախտելի քարինք մնացած են, որոց մէջ որպէս կը պատմեն, կը տեսնուի Աշխ Զաքէի խաչքարն, որ դեռ հազուագիւտ անձերու կը յիշեցնէ թէ «Այս Զաքին Պարսկաստանցի և խիստ արդարասէր եղած է, ընտանեկան յոռի վարմանց չը կարենալով տոկալ՝ խոյս տուած է իւր տնէն, ինք զինք նուիրած է գուսաներգութեան, բնակած է այս գիւղն, ժողովրդից «Աստուածային երգիչ» մականունը ստացած է, նաև շատ յարգանք գտած:

Աշրի Թուճճար կարսից կը լսէ սորա համբան և նախանձէ շարժելով խիստ զբաւոր հարցումներ կուղղէ նմա. Զաքէն սորա կը պատասխանէ մեղմ և Աստուածային ներշնչմամբ յօրինած մի բանաստեղծութեամբ¹: Թուճճար իւր բռնած ընթացքին վերայ կը զղջայ, կառնէ իւր սաղը, կանցնի յԱլաշկերտ, որ ներում խնդրէ իւր սագով: Երբ գիշեր ցերեկ մէկ անելով շտապեց, Քարձոր մտաւ, տեսաւ միայն Զաքիի գերեզմանը, նա մի շարաթ առաջ մեռած էր: Թուճճար իւր սագը ձեռք առաւ, մի շարաթ ամբողջ նորա գերեզմանի շուրջն նստած՝ ներում կը խնդրէր: Մտաբերեց թէ Զաքէի տուած վիրաւորանքի ի հատուցում՝ նորա վերան մի խաչ արձան կանգնէ: Թուճճար առաւ սագը. շրջեցաւ Բագրևանդայ վիճակն, գովեց Զաքէին. բարեգործ անձեր գտաւ. որոց օգնութեամբ մի մեծ

1. Միջոց չեմ ունեցած Աշրի Զաքէի բանաստեղծութիւններն զրի առնել, որչափ հետամուտ եղած եմ, գիտեմ որ նա Թուրքերէն երգած է, որոյ երկու երգն զրի առած եմ: